Սամվել Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ. ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆ

Բանալի բառեր. Արևմտյան Հայաստանի ինքնավարություն, Բեռլինի պայմանագիր, Նուբար փաշա, Մկրտիչ Խրիմյան:

Մեր նախորդ հոդվածում[1] լուսաբանել ենք Հայկական հարցի արծարծումը Սան Ստեֆանոյի պայմանագրում և դրա նախօրյակին: Այս հոդվածը նախորդի շարունակությունն է և փորձում է բացահայտել իրադարձությունների զարգացումը Սան Ստեֆանոյից մինչև Բեռլին: Ներկայացված են հայկական ինքնավարության նախագծերը, որոնք ներկայացվել էին մեծ տերություններին, հայ պատվիրակների գործունեությունը տարբեր երկրներում, օտարերկրյա դիվանագետների ու պետական գործիչների վերաբերմունքը Հայաստանի ինքնավարության գաղափարի հանդեպ: Կարևորվել է եգիպտահայ ականավոր պետական գործիչ և դիվանագետ Նուբար փաշայի առաջարկները և դրանք իրականություն դարձնելու հնարավորությունները:

1877-1878 թթ. պատերազմում Ռուսաստանի հաղթանակը, տարածքային ձեռքբերումները և ազդեցության մեծացումը Բալկաններում ու Մերձավոր Արևելքում առաջացրին եվրոպական տերությունների, հատկապես Մեծ Բրիտանիայի ու Ավստրո-Հունգարիայի լուրջ անհանգստությունը: Վերջիններիս ճնշման ներքո որոշվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայել Բեռլինում հրավիրված միջազգային վեհաժողովում: Ըստ 1856 թ. Փարիզի և 1871 թ. Լոնդոնի համաձայնագրերի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվելիք ցանկացած պայմանագիր վավերացվելու էր մյուս տերությունների կողմից: Պետք է նշել, որ Սան Ստեֆանոյի պայմանագրից չափազանց դժգոհ մնացին նաև հույները, ռումինները, սերբերը, բոսնիացիներն ու հերցոգովինցիները[2]:

Բեռլինում հրավիրվող վեհաժողովի լուրը նոր հույսեր արթնացրեց արևմտահայերի մեջ: Դեռ Սան Ստեֆանոյի պայմանագրի թանաքը չէր հասցրել չորանալ, երբ 1878 թ. մարտի 15-ին արևմտահայ գործիչները Ալեքսանդր II-ին ներկայացրին Հայաստանի ինքնավարության նոր նախագիծ[3]: Այն նախատեսում էր.

1. Հայաստանում նշանակվելու էր հայ լուսավորչական ընդհանուր կառավարիչ, որը կոչվելու էր մարզպան և վալի, ունենալու էր մյուշիրի աստիճան: Նրան նշանակելու էր սուլթանը՝ Ռուսաստանի կայսեր հավանությամբ:

2. Հայաստանի կուսակալներն ու գավառապետերը լինելու էին լուսավորչական, ընտրվելու էին Հայաստանի Երեսփոխանական ժողովի և հաստատվելու Բ. Դռան կողմից:

3. Հայերն էին վերահսկելու երկրում կարգի պահպանումը, և ոստիկանությունը կազմվելու էր հայերից:

4. Դատարանները գործելու էին քրիստոնյաների օրենքներով՝ հայ դատավորների նախագահությամբ: Ղադիները և կրոնական այլ պաշտոնյաներ մասնակցություն չէին ունենալու դատարանների աշխատանքին:

5. Վերացվելու էին քրդերի, չորբաջիների, դերեբեյների արտոնությունները:

6. Հարկերի նոր և արդար բաշխում էր կատարվելու:

7. Վակֆի (հոգևոր հաստատությունների կալվածքներ) բարեկարգում, կալվածական ու հողային հարցերի վերանայում էր կատարվելու:

8. Թուրքերը և Հայաստանի մնացած բնակչությունը զինաթափվելու էր:

---

[1] Պողոսյան Ս., Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878 թ., «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2017, էջ 67-80:

[2] Виниградов В., Балканская эпопея князя А. М. Горчакова, Москва, 2005, ст. 266-267.

[3] Լէօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 61-62:

9. Պատրաստվելու էին երկրի կառավարման հատուկ կանոնագրեր, որոնք վավերացնելու էր սուլթանը՝ Ռուսաստանի հավանությամբ:

10. Երաշխավորվելու էր Զեյթունի դարավոր ինքնավարությունը:

Այդ ծրագիրը Պետերբուրգ տարավ Խորեն արքեպիսկոպոս Նարբեյը: Նա վայելում էր պատրիարքի վստահությունը, տիրապետում էր մի շարք լեզուների, այդ թվում՝ ռուսերենին, ուներ ռուսամետ գործչի համբավ: Խ. Նարբեյը ռուսական արքունիքին առաջարկեց Արևմտյան Հայաստանի նահանգապետ նշանակել գեներալ Մ. Լորիս-Մելիքովին: Մարտի 14-ին Խ. Նարբեյին ընդունեց վարչապետ Ա. Գորչակովը, իսկ մարտի 18-ին՝ կայսրը: Ալեքսանդր II-ը բավարարվեց միայն բարեմաղթանքներ հղելով հայ ժողովրդին, բայց հայկական ծրագիրը Բեռլինում պաշտպանելու խոստումներ չտվեց[1]: Այդ հանդիպումները տեղի ունեցան Մ. Լորիս-Մելիքովի միջնորդությամբ, վերջինս նաև կայսրին խնդրել էր, որպեսզի ռուսական բանակի ներկայության պայմաններում բարենորոգումներ իրականացվեին Հայաստանում[2]: Պետերբուրգից Բեռլին մեկնելու նախօրյակին Խ. Նարբեյը հայ համայնքի համար պատարագ մատուցեց, ուր հույս հայտնեց, որ Թուրքիայի քրիստոնյաներին ազատություն շնորհելու կամք դրսևորած ռուսական միապետի դեպի հայ ժողովուրդն ունեցած տրամադրվածությունը «նրա հույսերի իրականացման լավագույն երաշխավորությունն է»[3]:

Ինքնավարության մեկ այլ ծրագիր կազմվեց Եվրոպա ուղարկելու համար: Դրա հեղինակն էր պոլսահայ նշանավոր պետական գործիչ, օսմանյան սահմանադրության համահեղինակներից Գ. Օտյանը: Այն կոչվում էր «Ծրագիր Կազմակերպական կանոնադրության Թրքական Հայաստանի համար»[4]: Այդ նախագծով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի զգալի մասի համար ստեղծել լայն ինքնավարություն, որն ինքնաբերաբար ժամանակի ընթացքում տանելու էր դեպի անկախություն: Սակայն այդ ծրագրի իրականացման համար պայմաններ դեռ չկային և հայ գործիչները սին հույսեր էին փայփայում քրիստոնյա Եվրոպայի օգնության սպասումներում:

1878 թ. մարտի 18-ին Ներսես պատրիարքը հանդիպեց բրիտանական դեսպան Հ. Լեյարդի հետ, սակայն չկարողացավ համոզել, որ Մեծ Բրիտանիան պաշտպանի Հայաստանի ինքնավարության ծրագիրը: Ընդհակառակը Հ. Լեյարդն իր կառավարությանն ուղարկած զեկուցագրում նշում էր, որ իրենց շահերից չի բխում ինքնավարություն տալ Հայաստանին և հայկական պահանջները համարում էր Ռուսաստանի նախաձեռնության արդյունք[5]: Հ. Լեյարդն արտգործնախարար Ռ. Սոլսբերիին համոզում էր, «թե Հայաստանի հայերը բոլորովին անպատրաստ են ինքնավարության և ինքնավար Հայաստանը չի կարող գոնե մեկ ամիս տոկալ քրդերի դեմ և պիտի դիմի ռուսների օգնության»[6]:

Հ. Լեյարդի հետ հանդիպեց նաև Գ. Օտյանը, ներկայացրեց հայկական պահանջները, սակայն նրան մտափոխել չկարողացավ[7]: Պետք է նշել, որ այս վճռորոշ շրջանում Հ. Լեյարդի ընդգծված հակահայկական դիրքորոշումը բավական թանկ նստեց արևմտահայերի վրա: Սակայն Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ խորամուխ չլինելով՝ պոլսահայերը մեծ հույսեր էին կապում նրա հետ:

Մինչ Հ. Լեյարդը հայկական ինքնավարության նախագիծը համարում էր ռուսական նախաձեռնության արդյունք, նույն ժամանակ ռուս դիվանագետները գրեթե վստահ էին, որ այն Հ. Լեյարդի գաղափարն է: Ռուս դիվանագետները փետրվարին

---

[1] Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 329-332:

[2] Պետրոսյան Վ., Կոմս Լորիս-Մելիքով, Ե., 2005, էջ 223:

[3] ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 57, թ. 3:

[4] «Անահիտ», Փարիզ, 1907, թիւ 6-9, էջ 145-146:

[5] Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878 թ. վեհաժողովին նախորդող շրջանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1996, թիվ 3, էջ 16:

[6] Կիրակոսյան Զ., 1878 թ. Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և անգլիական դիվանագիտությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1978, թիվ 1, էջ 91:

[7] Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914 թ.), Ե., 1999, էջ 113:

տեղեկություն էին ստացել, որ իբր «Լեյարդը խորհուրդ է տալիս հայոց պատրիարքին Բ. Դռնից պահանջելու ինքնավարություն շնորհել Հայաստանին, խոստանալով, որ Անգլիան կպաշտպանի այդ երկրամասի հարցը կոնֆերանսում, սակայն այդ առթիվ հրավիրված հայոց ազգային ժողովը դեմ է այդ առաջարկի իրականացմանը»[1]:

Չնայած երկու գերտերությունների՝ Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի բացասական տրամադրվածությանը՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը որոշեց Հայաստանի ինքնավարության հարցը բարձրացնել Բեռլինի վեհաժողովում:

Անշուշտ, կային հայ գործիչներ, որոնք նման պայմաններում ինքնավարության հարցի բարձրացումը համարում էին անմիտ և վտանգավոր քայլ:

Դոկտոր Հ. Թիրյաքյանը պատրիարքին զգուշացնում էր, որ տվյալ պայմաններում Հայկական հարցն անիմաստ է բարձրացնել, քանի որ մեծ տերությունները, իրենց շահերից ելնելով, այն կտապալեին: «Մանզումեի էֆքիար»-ի խմբագիր Կ. Փանոսյանը քննադատում էր ինքնավարության պահանջը, քանի որ դրանում հույսը դնում էին շահամոլ և նենգ Եվրոպայի վրա, որը ուզում է պահպանել Թուրքիայի գոյությունը իր շահադիտական նպատակների համար»[2]: Բնականաբար, համընդհանուր ոգևորության պայմաններում Հայկական հարցի բարձրացմանը դեմ հանդես եկող գործիչները որակվեցին որպես ազգի դավաճաններ, իսկ Կ. Փանոսյանի տպարանն ավերվեց:

«Արևելյան մամուլը» իրավացիորեն ափսոսանք էր հայտնում, որ հայերը հույսը դրել են միայն բողոքների վրա. «Սուրն ու թնդանոթը ավելի զորությամբ կխոսեին, քան թե բողոք ու գրիչ»: Մինչդեռ հայ ժողովուրդը «կկարծեր, թե իր դարավոր հավատարմությունը բավական ազդու երաշխավորություն մ'է ստանալու խաղաղությամբ, ինչ որ այլք զենքով խլելու ելեր էին»[3]:

Անշուշտ, ճիշտ էին այն գործիչները, ովքեր հասկանում էին, որ առանց զինված պայքարի ինքնավարության հասնելն ուղղակի պատրանք է: Սակայն պատրիարքարանը հույս ուներ, որ հարցը կարող է լուծվել մեծ տերությունների բարի կամքի դրսևորման միջոցով, չնայած, ինչպես տեսանք, նրանց ներկայացուցիչներն արդեն պարզ հասկացրել էին, որ դեմ են Հայաստանի ինքնավարությանը, քանի որ դա ուղղակիորեն չէր բխում իրենց պետությունների հետամտած աշխարհաքաղաքական նպատակադրումներից:

Հայկական հարցը Բեռլինում ներկայացնելու համար կազմավորվեց Ազգային պատվիրակություն: Այն գլխավորելու էր Տարոնի արքեպիսկոպոս և Կ. Պոլսի նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանը: Նա չէր տիրապետում որևէ եվրոպական լեզվի, չէր փայլում դիվանագիտական տաղանդով, սակայն որպես հայրենասեր ու ազնիվ գործիչ, չափազանց մեծ հեղինակություն ուներ արևմտահայերի մեջ:

Թուրքական իշխանությունները տեղյակ էին Մ. Խրիմյանի պատվիրակության մեկնմանը և իրենց համաձայնությունն էին տվել, որ Հայկական հարցը բարձրացվի Բեռլինի կոնֆերանսում[4]: Թուրքական կողմը գիտակցում էր, որ Սան Ստեֆանոյի պայմանագիրը, եթե նույնությամբ մնար, ապա Ռուսաստանը կստանար իրական հնարավորություն՝ ամրապնդվելու Արևմտյան Հայաստանում և նույնիսկ զորքերն այնտեղ մշտապես պահելու պատրվակ: Դա թուրքական կողմի համար նշանակում էր արևմտահայկական տարածքների կորուստ: Այս հանգամանքով էր պայմանավորված, որ սուլթանական իշխանություններն ոչ միայն չէին խոչընդոտել, այլ նույնիսկ խրախուսել էին պատրիարքարանին՝ պատվիրակություն ուղարկելու Բեռլին:

Պատվիրակությանը պետք է Բեռլինում միանար Խորեն արքեպիսկոպոս Նարբեյը, որը դիվանագիտական հանձնարարությամբ մեկնեց Պետերբուրգ: Նա խելացի էր, պերճախոս, ինչ-որ տեղ դիվանագետ, համարձակ: Շատ դեպքերում նրա համարձակությունն ու դիվանագիտական տաղանդն օգնել էին սուլթանի մոտ պաշտպանելու հայ

---

[1] ՀԱԱ, ֆ. 450, g. 2, գ. 57, թ. 1:

[2] Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային - ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, էջ 139:

[3] «Արեւելեան մամուլ», Կ. Պոլիս, 1878, մայիս, էջ 9-10:

[4] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, էջ 8:

համայնքի իրավունքները: Սակայն այս գործիչը թուլություն ուներ արտաքին փայլի, շքանշանների ու տիտղոսների նկատմամբ[1]: Մ. Օրմանյանը նրա մասին գրում է. «Նար-Պէյի կեանքը առեղծուածային ըլլալու չափ յուրօրինակ զուգորդութիւն մըն է մտքի ու գործի, լեզուի ու գրողի գերազանցապէս ընտիր ձիրքերու հետ խառնուած թեթեւութեանց եւ անտեղութեանց եւ ստորնութեանց»[2]:

Պատվիրակության թարգմանիչն ու քարտուղարն էր Մինաս Չերազը: Նա հետագայում աչքի ընկավ որպես գրող, թարգմանիչ, խմբագիր և հասարակական գործիչ:

Պատվիրակությանը Բեռլինում միացավ նաև մանկավարժ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ Ստեփան Փափազյանը[3]: Նրա առջև խնդիր էր դրված վերահսկել երկու արքեպիսկոպոսների գործունեությունը և նրանց պահել պատրիարքին ցանկալի քաղաքական ուղու վրա:

Մ. Խրիմյանն ու Խ. Նարբեյը բնավորության գծերով, ապրելակերպով, ձգտումներով լրիվ հակապատկեր էին և ընդգծված հակակրանք ունեին միմյանց նկատմամբ: Մ. Խրիմյանը հույս ուներ աջակցություն ստանալ Մեծ Բրիտանիայից, Խ. Նարբեյը՝ Ռուսաստանից: Այդ անհամերաշխ կեցվածքը, բնականաբար, իր կնիքը թողեց նրանց ծավալած գործունեության վրա:

Ներսես պատրիարքը մարտի սկզբին Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանին ուղարկեց էջմիածին՝ Գևորգ Դ կաթողիկոսի մոտ, որպեսզի վեհափառն իր հերթին ցարից խնդրի օգնել արևմտահայերին: Տեղյակ լինելով վեհափառի հակառուսական դիրքորոշմանը՝ Իզմիրլյանը նախապես նամակ ուղարկեց կաթողիկոսի մերձավոր Վահրամ եպիսկոպոս Մանկունուն, որպեսզի մեղմի նրանց կոշտ մոտեցումը[4]: Ամենայն հայոց կաթողիկոսը 6 օր սպասեցրեց պատրիարքի ներկայացուցչին, ապա ընդունեց և կոպտորեն ասաց. «Գնա՛ ըսէ այդ զէվզէկին (Ներսես պատրիարքին) որ այդպիսի յիմարութիւններէ ետ կենայ. Սուլթանը աւելի լաւ է Հայոց համար քան Ցարը»[5]: Կաթողիկոսը պատրիարքին ուղարկեց մի կարճ գրություն, ուր նշում էր, որ իր կարծիքները ու պատասխանները բանավոր ձևով հայտնել է Մատթեոս արք. Իզմիրլյանին[6]:

Ինչպես տեսնում ենք, կաթողիկոսը կողմնակից չէր պատրիարքարանի գործողություններին: Համաձայն չլինելով սուլթանի «ավելի լավ» լինելու կաթողիկոսի մատնանշման հետ՝ պետք է արձանագրել, որ վերջինս, հավանաբար, լավ գիտեր ռուսական արքունիքի մոտեցումը Հայկական հարցին, այդ պատճառով էլ չդիմեց Ռուսաստանի կայսրին: Ապրիլի 12-ին կաթողիկոսին դիմեց նաև ճանաչված հասարակական գործիչ Սերվիչենը (Սերովբե Վիչենյան), բայց նա ևս չկարողացավ փոխել Գևորգ Դ-ի դիրքորոշումը[7]:

Փաստորեն, հայ դիվանագիտությունը, որն այդ ընթացքում ղեկավարվում էր մեր եկեղեցու կողմից, այս վճռորոշ պահին չափազանց անկազմակերպ և անպատրաստ վիճակում էր, տարաձայնություններ կային կաթողիկոսի, պատրիարքի, Մ. Խրիմյանի ու Խ. Նարբեյի միջև: Միասնական դիրքորոշման բացակայությունը և միջազգային գործընթացների ոչ ճիշտ ընկալումն ի վերջո հանգեցրին ձախողման և հիասթափության:

1878 թ. մարտի 20-ին Մ. Խրիմյանի պատվիրակությունը մեկնեց Եվրոպա: Մարտի 26-ին Հռոմում նրանց ընդունեց Իտալիայի նորընտիր արտգործնախարար կոմս Լուիջի Կորտին, որը խոստացավ Բեռլինի կոնֆերանսում պաշտպանել հայկական խնդիրը[8]: Դա բավական ոգևորեց հայ պատվիրակներին, սակայն դրանք միայն սին խոստումներ

---

[1] Զարդարեան Վ., Յիշատակարան, (1512-1912), հ. Բ, Կ. Պոլիս, 1911, էջ 233-242:
[2] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Գ, Երուսաղեմ, 1927, էջ 4677:
[3] Զարդարեան Վ Յիշատակարան, (1512-1912), հ. Բ, Կ. Պոլիս, 1911, էջ 197-200:
[4] Պետրոսյան Վ., Կոմս Լորիս-Մելիքով, Ե., 2005, էջ 211:
[5] «Անահիտ», 1906, թիւ 3-5, էջ 42:
[6] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Ժ, Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, Կազմող՝ Ս. Ա. Բէհբուդեան, Ե., 2002, էջ 214:
[7] Սարուխան, նշվ. աշխ., էջ 325-327:
[8] Մինաս Չերազ, Հայաստան և Իտալիա, Կ. Պոլիս, 1879, էջ 41:

էին, քանզի Լ. Կորտին նույնիսկ չէր պատկերացնում՝ որտեղ է Հայաստանը՝ Եվրոպայում թե Ասիայում[1]:

Ապրիլի 5-ին Ֆրանսիայի արտգործնախարար, ճանաչված արևելագետ ու հնագետ Վիլյամ Վադինգտոնը Մ. Խրիմյանի հետ հանդիպման ընթացքում հավաստիացրեց, որ կպաշտպանի հայերի շահերը, բայց պետք է ավելի իրատեսական ծրագիր ներկայացվի: Նա առաջարկեց Արևմտյան Հայաստանի մասին մանրամասն տեղեկագիր և վիճակագրություն ներկայացնել, որպեսզի եվրոպացի պետական գործիչների համար պարզ լինի, թե ինչ երկրի մասին է խոսքը, և ինչ ժողովրդագրական պատկեր է այն ներկայացնում[2]: Այդ խորհուրդը հաշվի առնվեց, և Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից կազմվեց Արևմտյան Հայաստանի մասին տեղեկագիր[3] ու վիճակագրություն[4]: Վերոշարադրյալ փաստաթղթերը Մ. Խրիմյանին փոխանցեց Լոնդոն մեկնող պատրիարքական պատվիրակ Հ. Մկրյանը[5]:

Փարիզում բրիտանական դեսպան Ռ. Լայընսը ևս նշեց, որ հայերը պետք է ավելի չափավոր պահանջներ ներկայացնեն[6]: Ապրիլի 6-ին Փարիզում հայ պատվիրակները հանդիպեցին տեղի գերմանական դեսպան, իշխան Քլոդվիգ Հոհենլոհեին: Վերջինս դեմ էր հայկական պահանջներին և կասկած հայտնեց, որ հայերը կկարողանան զսպել Հայաստանի մահմեդական հրոսակներին, սակայն Մ. Խրիմյանը հավաստիացրեց, որ կսանձահարեն, եթե իրենց զենք տրվի: Ապրիլի 11-ին Մ. Խրիմյանը և Մ. Չերազը ժամանեցին Լոնդոն, ուր հանգրվանեցին Սեթ Աբգարի տանը: Վերջինս հայասիրական շարժումը Մեծ Բրիտանիայում ծավալելու համար Ջեյմս Բրայսի հետ հիմնել էր Բրիտանա-հայկական ընկերությունը, ինչպես նաև Լոնդոնում 1878 թ. հրատարակել էր Հայկական հարցին նվիրված գրքույկ՝ «Հայերը և Արևելյան հարցը» (The Armenians and the Eastern Question), որով առաջարկում էր Հայաստանին տալ Լիբանանի կարգավիճակի նման ինքնավարություն[7]:

Վիկտորյա թագուհին հայ պատվիրակներին չընդունեց: Նրանց չընդունեց նաև վարչապետ Բենջամին Դիզրայելին՝ լորդ Բիքոնսֆիլդը: Դա կարող էր պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ հայ գործիչները մինչև վարչապետի մոտ գնալը հանդիպել էին նրա քաղաքական հակառակորդ, նախկին վարչապետ, լիբերալների առաջնորդ Վիլյամ Գլադստոնի հետ, որի համար քննադատվեցին բրիտանահայ գործիչների կողմից, բայց իրենց սխալը այդպես էլ չընդունեցին[8]:

Իհարկե, դրանից ոչինչ չէր փոխվում, քանի որ հաշվի առնելով հայ պատվիրակների դիվանագիտական կարողությունները՝ նրանք ի վիճակի չէին փոխելու բրիտանական քաղաքականության ուղղությունը: Դա ակնառու կերպով երևաց նրանց հաջորդ հանդիպումներից:

Մայիսի 10-ին Լոնդոնում Մ. Խրիմյանին ընդունեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ռ. Սոլսբերին, որը նույնպես Հայաստանի ինքնավարության հարցին հոռետեսորեն մոտեցավ և որևէ խոստում չտվեց: Նա Մ. Չերազին հարցրեց, թե ի՞նչ լեզվով է խոսում Մ. Խրիմյանը, և զարմացավ, որ հայոց լեզու գոյություն ունի, քանի որ մտածում էր, թե հայերը խոսում են թուրքերեն[9]:

Պետք է նշել, որ այդ հանդիպման ժամանակ Մ. Խրիմյանը բավական զգուշավոր էր ներկայացնում հայկական պահանջները՝ խուսափելով բացահայտորեն քննադատել թուրքական կառավարությանը: Նա փորձում էր համոզել, որ հայերը թշնամաբար չեն տրամադրված օսմանյան պետության նկատմամբ և անջատողական որևէ ձգտում

---

[1] Նույն տեղում, էջ 18-19:
[2] Գաբիկյան Խ., Հայկական հարցը Արեւելեան հարցի մէջ (1860-1880), Պէյրութ, 1962, էջ 200:
[3] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, էջ 221-222:
[4] Նույն տեղում, էջ 223-226:
[5] Հայկական համառոտ հանրագիտարան, Ե., 1999, հ. 3, էջ 741:
[6] Գաբիկյան Խ., նշվ. աշխ., էջ 200:
[7] ՀԱԱ, ֆ. 57, g. 1, գ. 63, թ. 7-8:
[8] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 154:
[9] «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 1923, թիւ 18:

չունեն: Մ. Խրիմյանը Հայաստանում կատարվող բոլոր հարստահարությունների պատճառ համարում էր քրդերին, որոնք իբր ճնշում էին նաև տեղի թուրք բնակչությանը:

Այդ հանդիպման արդյունքներից եղավ այն, որ Ռ. Սոլսբերին մայիսի 30-ին Հ. Լեյարդին ուղարկած նամակում հայերի մասին գրում էր. «Ինքնակառավարութեան ընդունակութիւն և անկախութեան փափաք չունին, բայց իրենց հանգստութիւնն ու քաղաքական բարեկեցութեան յոյսերը բոլորովին Սուլթանին կառավարութեան պարտական են»[1]:

Փաստորեն, հայ պատվիրակների զգուշավորությունը և դիվանագիտական ունակությունների բացակայությունը բրիտանացի գործիչներին ավելի հակեց այն մտքին, որ հայերը դեռ չեն հասունացել ինքնավարության համար:

Ինչպես տեսնում ենք, եվրոպական գործիչներից շատերը նույնիսկ պատկերացում չունեին մեր լեզվի ու երկրի գտնվելու վայրի մասին: Իսկ որոշ ֆրանսիացիներ հայ պատվիրակների հետ հանդիպելիս մտածում էին, որ ամերիկացի ասելու փոխարեն «Առմենի կըսեինք «սխալմամբ»[2],- գրում է Մ. Չերազը: Բնականաբար, այդ եվրոպացի պետական գործիչներին չէր հետաքրքրում հայերի և Հայաստանի ճակատագիրը, քանի որ նրանք չէին կարող պատկերացնել, թե ինչ շահեր կարող են ունենալ իրենց համար անհայտ այդ ճնշված ազգին ինքնավարություն տալու դեպքում:

Լոնդոնում թուրքական դեսպանը՝ ազգությամբ հույն Մյուզյուրուս փաշան, Մ. Խրիմյանին խորհուրդ տվեց հույս չդնել եվրոպական պետությունների վրա, քանի որ նրանք ուժ չունեին Փոքր Ասիայի մեջ[3]:

Փաստորեն, հայկական պատվիրակությունը որևէ գործնական հաջողություն չարձանագրեց, քանի որ եվրոպական պետությունները և Ռուսաստանը շահագրգռված չէին Հայաստանի ինքնավարության հարցում: Չնայած եվրոպացի պետական որոշ գործիչներ համակրանքով արտահայտվեցին հայերի մասին, սակայն նրանք ևս նշեցին, որ պատրիարքարանի կազմած ինքնավարության ծրագիրն անիրագործելի էր տվյալ պահին, և խորհուրդ տվեցին չափավորել պահանջները: Նման պայմաններում բնական կլիներ, եթե հայկական պատվիրակությունը վերանայեր իր ծրագիրը և ավելի համեստ, բայց եվրոպական տերությունների համար քիչ թե շատ ընդունելի պահանջներ ներկայացներ: Հետաքրքիրն այն է, որ եվրոպացիների համար ընդունելի և հայանպաստ նախագիծ առաջ քաշվեց, սակայն այդ հնարավորությունից օգտվել չհաջողվեց:

1878 թ. մարտի 31-ին հայկական պատվիրակության ղեկավար Մկրտիչ Խրիմյանը Փարիզում հանդիպում ունեցավ եգիպտահայ նշանավոր պետական գործիչ Նուբար փաշայի հետ: Վերջինս երիտասարդ տարիքից Եգիպտոսում զբաղեցրել էր դիվանագիտական ու պետական բարձր պաշտոններ, մեծ ճանաչում ուներ Եվրոպայում, անձամբ ճանաչում էր եվրոպական քաղաքականությունը կերտող բոլոր գործիչներին: 1877 թ. Բուլղարական հարցի քննարկման ժամանակ Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը տերություններին առաջարկել էր Բուլղարիայի կառավարիչ նշանակել Նուբար փաշային, որը դրական արձագանք էր ունեցել, սակայն չիրականացավ ռուս-թուրքական պատերազմի սկսվելու հետևանքով[4]: Այդ փաստը վկայում է հայազգի գործչի միջազգային բարձր վարկանիշի մասին:

Ա. Չոպանյանը, Նուբար փաշայի հետ համեմատելով պոլսահայ նշանավոր գործիչներին (Գ. Օտյան, Հ. Նուրյան, Ս. Ասլանյան, Սերվիչեն), գրում է. «Ատոնց մէջ ոչ մէկն ունէր Նուպարին յստակ, հեռատես, սուր միտքը, գործնական ոգին, մաթեմաթիքական հաշուագիտութիւնը, ծրագիր մը ի գործ դնելու համար ունեցած ճարպկութեան, անձնական հրապոյրի ու արդէն իսկ «եւրոպական մեծահռչակ անուն վայելող ազդեցիկ անձնաւորութեան» առաւելութիւնները»[5]:

---

[1] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, էջ 175:
[2] Մինաս Չերազ, Հայաստան և Իտալիա, էջ 14:
[3] Գաբիկյան Խ., նշվ. աշխ., էջ 197-202:
[4] Զարդարեան Կ., Նուպարեան գերդաստան, «Նոր Հայաստան» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1919, թիւ 6, էջ 90-91:
[5] Չօպանեան Ա., Ստեփան Փափազեանի յուշատետրը, «Անահիտ», 1907, թիւ 6-9, էջ 154:

Նուբար փաշան Մ. Խրիմյանին առաջարկեց իր միջնորդությունը և Հայկական հարցի լուծման սեփական տարբերակը: Նա քաջածանոթ էր եվրոպական քաղաքականությանը և առաջարկում էր կոնֆերանսին չներկայանալ լայն ինքնավարության պահանջով, քանի որ տերությունները դա կմերժեին:

Նուբարը կազմեց հայկական պահանջների նոր ծրագիր: Այն կազմված էր բավական գրագետ, հիմնված էր օսմանյան օրենքների, սուլթանների հայտարարությունների և միջազգային իրավունքի նորմերի վրա[1]: Ծրագրի ներածական մասում Նուբարը շատ հասկանալի ու համոզիչ փաստարկներով բացատրում էր բարենորոգումների անհրաժեշտությունը, միաժամանակ փորձում էր սիրաշահել թե՛ թուրքերին, թե՛ Բրիտանիային ու Ռուսաստանին, քանի որ գիտակցում էր, որ այդ կողմերից որևէ մեկի լուրջ ընդդիմությունը կհանգեցներ Հայկական հարցի տապալմանը: Նուբարն անընդհատ շեշտում էր այն փաստը, որ բարենորոգումներն անհրաժեշտ են ոչ միայն հայերին, այլ նաև մահմեդականներին, իսկ իր ծրագիրը ոչ թե բաժանում է նախատեսում, այլ հայերի համար քաղաքացիական իրավունքների ապահովում: Մատնանշում էր, որ իր ծրագրում առաջարկած նոր հաստատությունների ստեղծումը, արդարադատության համակարգի բարելավումը, նոր որակի պաշտոնյաների նշանակումը, առանց քաղաքական կացությունը փոխելու, կարող են ապահովել բարեկեցություն տեղի հայերի ու մահմեդականների համար: Այդտեղ ինքնավարություն բառը կամ Հայաստանի սահմանների մասին խոսք չկար: Նուբարը միայն պահանջում էր լայն լիազորություններով հայ կառավարիչ, դատական, տնտեսական և վարչական բարեփոխումներ: Կարծում ենք, դա ինքնավարության հասնելու ճիշտ հաշվարկված նախագիծ էր:

Ա. Չոպանյանը այդ ծրագիրը բնորոշում է որպես «ճարպկութեան ու գործնականութեան գլուխ գործոց»[2]: Իսկ Սարուխանը գրում է. «Նուպար փաշայի յիշատակագիրն իր պարզ և համոզիչ լեզուովն ապացուցումն էր միայն Հայաստանում բարենորոգումների անհրաժեշտութիւնն և մատնանիշ էր անում բարեկարգութիւնների այն minimum-ն, որ անխուսափելիօրէն կարևոր էր, երկրի մէջ խաղաղութիւն և հայոց վիճակի մէջ բարեփոխում մուծանելու համար»[3]:

Փաստորեն, պատրիարքարանի ծրագրի համեմատությամբ Նուբարի ծրագիրը բավական կշռադատված ու իրատեսական էր: Այն նպատակ ուներ Արևմտյան Հայաստանում հաստատել տալ հայազգի կառավարիչ, հավասար պայմաններ ստեղծել հայերի և մահմեդականների համար, բարելավել երկրամասի արդարադատության համակարգը, զարգացնել տնտեսությունը: Այդ դեպքում, Նուբարի կարծիքով, հայերը կարճ ժամանակում զարգացման մակարդակով առաջ կանցնեին մահմեդականներից և կհասնեին լայն ինքնավարության, ինչպես նաև իրական հնարավորություններ կստեղծվեին Հայաստանի անկախության վերականգնման համար:

Իր ծրագիրն առաջ քաշելիս Նուբարը հենվում էր եգիպտական փորձի վրա, երբ այդ երկրի արդարադատության համակարգում նրա իրականացրած բարեփոխումների շնորհիվ Եգիպտոսը բռնել էր զարգացման ավելի արդյունավետ ուղի:

Այդ ծրագրին հավանություն տվեցին նաև հայազգի երկու նշանավոր պետական գործիչներ՝ գեներալ Մ. Լորիս-Մելիքովը և Լոնդոնում Պարսկաստանի դեսպան ու Բեռլինի կոնֆերանսում պարսկական պատվիրակության ղեկավար Մելքոն խանը: Փարիզի բրիտանական դեսպան լորդ Ռ. Լայընսը այն հավանել ու ասել էր. «Ահա արեւելեան խնդրին բանալին» և անմիջապես իր կառավարությանն էր ներկայացրել, իսկ Փարի-

---

[1] Նուբար փաշայի ծրագիրը հրատարակվել է Լոնդոնի “The Nineteenth Century” ամսագրի 1878 թ. սեպտեմբերի համարում: Մենք օգտվել ենք Փարիզի «Անահիտ» ամսագրում երկու անգամ տպագրված թարգմանությունից: Տես՝ 1899 թ. մարտ-ապրիլ, թիւ 5-6, էջ 158-161 և 1907 թ. յունիս-սեպտեմբեր, թիւ 6-9, էջ 146-149: Նաև տես՝ «Արագած» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 19 Հոկտեմբեր 1919, էջ 516-519:

[2] «Անահիտ», 1899, մարտ-ապրիլ, թիւ 5-6, էջ 152:

[3] Սարուխան, նշվ. աշխ., էջ 447:

զում Գերմանիայի դեսպան կոմս Ք. Հոհենլոհեն, ծանոթանալով դրան, «սքանչացում յայտնած է» [1]:

Մ. Խրիմյանը լիովին կողմ արտահայտվեց Նուբարի ծրագրին, սակայն Ներսես պատրիարքը կտրականապես մերժեց այն՝ համարելով չափավոր և պահանջեց հասնել պատրիարքարանի ծրագրի ընդունմանը:

Հետագայում Նուբար փաշան գրում է. «1878 թ. Բարիզ կը գտնուէի: Ներսէս Պատրիարքին ուղարկած չորս պատուիրակները եկած էին զիս տեսնելու, խորհուրդ եւ նպաստ խնդրելու համար: Ես իրենց թելադրեցի՝ որ պատուիրակութիւնը ինծի հանձնէին եւ ես բոլոր ծախքերը ու աւելին իսկ ընելու յանձնառու կ'ըլլայի: ... Թողուցէք ինձ, որ ջանամ ընդունիլ տալ եւ կիրարկել իմ վարչական համեստ ծրագիրս: Անգլիական պատուիրակները՝ Լորտ Պիքընսֆիլտ եւ Սալըզպըրի, Պիզմարք եւ նոյն իսկ ռուսական պատուիրակները բարեկամներս են: Գործ ունեցած եմ անոնց հետ, լաւ կը ճանչնան զիս ու կը սիրեն, եւ ես կրնամ ընդունիլ տալ իմ չափաւոր ծրագիրս՝ Հայաստանի վեց նահանգներուն մէջ Դատարանական Բարեկարգութիւն. այսինքն դատաստանական հաւասարութիւն հայերուն եւ իսլամներուն միջեւ: Ես իսկ յանձնառու կ'ըլլամ ներմուծել այդ բարեկարգութիւնները: Ասիկա բոլոր մեր պահանջներուն գոհացում կու տայ... Հայ պատուիրակները համոզուեցան, հաճեցան եւ մեկնեցան Պերլին, ուրկէ պիտի հեռագրէին անյապաղ՝ որ ես ալ ճամբայ ելլէի: Սպասեցի հինգ օր, ութ օր: Երկու շաբաթ վերջ նամակ մը ստացայ փոխանակ հեռագրի: Ստորագրողն էր Մինաս Չերազ, քարտուղար հայ պատուիրակութեան: Պարունակութիւնը լակոնական էր եւ այս.- «Ազգը չի ճանչնար Ձեզ իրեն ներկայացուցիչ եւ մենք ենք անոր պատուիրակները Պէրլինի Վեհաժողովին»[2]:

Հունիսի 15-ին Կ. Պոլսից ստացված հրահանգների համաձայն՝ Բեռլինից հեռագիր ուղարկվեց Նուբարին, որով արգելվում էր միջամտել Հայկական հարցին: Այն կազմել էին Ս. Փափազյանը և Մ. Չերազը: Մ. Խրիմյանը կտրականապես դեմ էր Նուբարին բանակցային գործընթացից հեռու պահելու պոլսահայերի քաղաքականությանը: Նա հրաժարվեց ստորագրել այդ հեռագիրը, որն ուղարկվեց Մ. Չերազի ստորագրությամբ[3]:

Նուբար փաշան, տեսնելով, որ իրեն Բեռլին չեն հրավիրում, հունիսի 16-ին իր նախագիծն ուղարկեց վեհաժողովի անդամներին[4]: Նուբարն այն հրատարակեց նաև Լոնդոնի «Նայնթին սենչըրի» պարբերականում: Բրիտանիայի վարչապետ Բիքոնսֆիլդը, ծանոթանալով Նուբարի ծրագրին, նրան Բեռլինի վեհաժողովից հետո հրավիրեց Լոնդոն՝ քննարկելու Հայկական հարցը[5]: Սակայն Բեռլինի պայմանագրի ստորագրումից հետո Նուբարի ծրագրի քննարկումը որևէ էական արդյունք չէր կարող ունենալ:

Բեռլինի վեհաժողովից երկու տասնամյակ անց Նուբարը ցավով էր հիշում, որ չի կարողացել օգտակար լինել իր ժողովրդին. «Քսան տարի, ես գիտեմ թէ ինչ ըրած կ'ըլլայի այն երկիրը քսան տարուան մէջ»[6]: Պատրիարքի կողմից իր ծրագրի մերժումն ու Հայկական հարցի ձախողումը Նուբար փաշան ծանր տարավ: Այդ մասին Ա. Չոպանյանը նշում է. «Իր կեանքին մեծ ցաւը եղած էր այդ անհասկացողութիւնը զոր ցուցուցեր էր Հայ ազգը: Քսան անգամ դարակէ հանած է իր ծրագրին դեղնած տետրակիկը, և գուրգուրանքով, տրտմութեամբ և խանդավառութեամբ կարդացած է զայն ինծի»[7]:

Նուբար փաշան հետագայում հետևյալ կերպ է բնորոշել իր գործունեությունը. «Ես կեանքս նուիրեցի Եգիպտոսին, որովհետեւ բաղդը իմ առջիս այդ գործը հանեց, հրա-

---

[1] Ալպոյաճեան Ա., Նուպար հայր եւ Հայկական խնդիրը, «Նոր Հայաստան» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1918, թիւ 3, էջ 36:

[2] Գէորգեան Տ., Նուպար Փաշա. Պետական մարդը եւ արդարութեան ռահվիրան, «Արեւ», Գահիրէ, 1976, 5 Ապրիլ:

[3] Պատգամաւորի մը յուշատետրէն, «Անահիտ», 1900, թիւ 3, էջ 93-94:

[4] «Անահիտ», 1907, թիւ 10-12, էջ 163:

[5] Նույն տեղում, էջ 165:

[6] «Նոր կեանք» հանդէս, Լոնդոն, 1899, 1 փետրուար, էջ 41:

[7] Ալպոյաճեան Ա., Նուպար հայր եւ Հայկական խնդիրը, էջ 36:

պուրուեցայ անկից, եւ կապուեցայ: Բայց օտար երկրի մէջ այդ գործունէութիւնս երբեք ինծի չմոռցուց, որ Հայ մըն եմ»[1]:

Փաստորեն, մեծանուն հայ գործիչը, որն ամբողջ կյանքը նվիրել էր օտար երկրի զարգացմանն ու բարգավաճմանը, պատմության դիպվածով հնարավորություն էր ստացել ծառայել նաև սեփական հայրենիքի ազատության ու զարգացման գործին, սակայն ինչ-ինչ հանգամանքներ թույլ չտվեցին Սյունիքի մելիքներից սերող Նուբար փաշային իրականացնել այդ նվիրական երազանքը: Այդ առիթով Զեյթունի ապստամբության հերոսներից Ապահ Պետրոսյանը 1918 թ. վերջին գրում է. «Մեծն Նուբարը նախագծում ու երազում էր Հայաստանի ճակատագիրը, բայց չտեսավ այն»[2]:

Ինչպես տեսնում ենք, հայ ազդեցիկ գործիչներից շատերի սնափառությունն ու անզիջում կեցվածքը, մի գործոն, որը, ցավոք սրտի, հետագայում փոխանցվելու էր համագործակցելու փոխարեն իրար դեմ պայքարող ազգային կուսակցություններին, թույլ չտվեցին ընդունել և օգտագործել հայ դիվանագետի ու պետական գործչի ընդունակությունները:

1878 թ. մայիսի վերջին Մ. Խրիմյանը և Մ. Չերազը մեկնեցին Բեռլին: Փարիզից, որպես գերմաներենի թարգմանիչ, նրանց միացավ Տաճատ Պեյլերյանը: Մայիսի 29-ին Բեռլինում նրանց միացավ Ս. Փափազյանը:

Մայիսի 25-ին Կ. Պոլսում՝ Գ. Օտյանի տանը գումարված խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին պատրիարքը, Ս. Ասլանյանը, Հ. Նուրյանը և այլ գործիչներ, որոշվել էր Բեռլին ուղարկել քաղաքական հարցերից գլուխ հանող նաև աշխարհիկ գործիչ: Այդպիսով, Ս. Փափազյանին հանձնարարվել էր անմիջապես մեկնել Բեռլին և միանալ հայկական պատվիրակությանը[3]: Հունիսի 2-ին Բեռլին հասավ նաև Խ. Նարբեյը[4]:

Հայ պատվիրակները բավական ակտիվորեն սկսեցին հանդիպումներ ունենալ մեծ տերությունների ու թուրքական պատվիրակության ներկայացուցիչների հետ: Բեռլինում թուրքական դեսպան Սաադուլլահ բեյը հայ պատվիրակներին տեղեկացրեց, որ եթե նրանց ցանկացածը Հայաստանում հայ կառավարիչ նշանակելն է, ապա դա անմիջապես կարող էին իրականացնել, և առաջարկեց հեռանալ Բեռլինից: Սակայն հայ գործիչներն առաջարկեցին, որպեսզի նաև եվրոպական վերահսկողություն լինի, որն առաջացրեց թուրք դեսպանի դժգոհությունը[5]: Այդ մասին տեղեկանալով՝ Կ. Պոլսի պատրիարքարանից հայ պատվիրակներին հրահանգեցին այլևս թուրքերի հետ չհարաբերվել[6]:

Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը, որը նախագահելու էր Բեռլինի վեհաժողովում, հայ պատվիրակներին չընդունեց: Նրա քարտուղար դոկտոր Հուլիոս Բուշը, որը նախկինում Կ. Պոլսի գերմանական դեսպանատանն էր աշխատել, մտերիմ հարաբերությունների մեջ էր եղել Գ. Օտյանի և Սերվիչենի հետ, խորհուրդ տվեց չափավորել պահանջները: Պատվիրակները հանդիպեցին գահաժառանգ Ֆրիդրիխին և կայսրուհի Ավգուստային, սակայն նրանք բարեմաղթանքներից այն կողմ չանցան, իսկ Օ. Բիսմարկը չփոխեց դիրքորոշումը[7]:

Մ. Լորիս-Մելիքովը հունիսի 16-ին հանդիպեց հայ պատվիրակների հետ, խոստացավ բարեխոսել ռուսական դեսպանության ղեկավար Ա. Գորչակովի մոտ: Նա առաջարկեց դիմել առանց խտրականության բոլորին, օգտագործել հնարավոր բոլոր միջոցները՝ հասնելու նպատակին. «…կառաւարութեանց մէջ խտրութիւն մի դնէք. Ամե-

---

[1] Նույն տեղում, էջ 35:
[2] ՀԱԱ, ֆ. 453, g. 1, գ. 40, թ. 2:
[3] Պատգամաւորի մը յուշատետրէն, «Անահիտ», 1899, թիւ 1-2, էջ 36:
[4] Նույն տեղում, էջ 37:
[5] Նույն տեղում, էջ 38:
[6] Նույն տեղում, 1900, թիւ 3, էջ 92:
[7] Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 82-83:

նէն օգուտ քաղել ջանացէք. 9 դար է, որ հայ ազգին այսպիսի բարեպատեհ առիթ չէր պատահած, օգուտ քաղելու է»[1],- խորհուրդ տվեց մեծանուն հայ զորավարը:

Հայ պատվիրակները դեռ հույս ունեին, որ վեհաժողովում քննարկվելու է Հայկական հարցը և հնարավոր է, որ Հայաստանին ինքնավարություն տրվի, չնայած վերջին ամիսների իրադարձությունները և նրանց վարած բանակցությունների արդյունքները որևէ լավատեսության հիմք չէին տալիս: Առավել հետաքրքիրն այն է, որ պատվիրակների միջև համաձայնություն չկար, թե ինչպիսի ինքնավարություն են պահանջելու: Ճիշտ է, նրանք պարտավոր էին ներկայացնել պատրիարքարանի կազմած նախագիծը, բայց թե՛ Մ. Խրիմյանը, թե՛ Խ. Նարբեյը համոզված էին, որ այն կտապալվի:

Խ. Նարբեյը գտնում էր, որ պետք է բոլոր գործողությունները համաձայնեցնել Ռուսաստանի հետ, նպաստել, որ Արևմտյան Հայաստանում ուժեղանա Ռուսաստանի դիրքը, կամ այն մնա ռուսական գրավման տակ, իսկ այնտեղի ընդհանուր կառավարիչ նշանակվի տաղանդավոր ռազմական ու պետական գործիչ Մ. Լորիս-Մելիքովը: Խ. Նարբեյի կարծիքով հայերը պետք է փորձեին ինքնավարություն ձեռք բերել Կիլիկիայում[2]: Նա վստահ էր, որ ռուսները թույլ չեն տա Արևմտյան Հայաստանում ինքնավարություն ստեղծել, որպեսզի իրենց հետագա նվաճողական ծրագրերի իրականացմանը հայկական պատնեշը չխոչընդոտեր: Այդ ծրագրին հետևելու խորհուրդը տվել էր գեներալ Մ. Լորիս-Մելիքովը[3]:

Սակայն պատվիրակության մյուս անդամներն ու պոլսահայ գործիչները կտրականապես դեմ էին Արևմտյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ թողնելու և Կիլիկիայում ինքնավարություն պահանջելու գաղափարին:

Հարցին ավելի իրատեսորեն էր մոտենում Մ. Խրիմյանը: Նա համոզված էր, որ պետք է ներկայացնեին Նուբար փաշայի նախագիծը, իսկ վերջինիս հրավիրեին Բեռլին, որպեսզի անձամբ վեհաժողովին ներկայացներ իր ծրագիրը: Մ. Խրիմյանը վստահ էր, որ Նուբարն ի վիճակի է հաջողությամբ պաշտպանել Հայկական հարցը, քանի որ ավելի կարող ու մեծ հնարավորություններ ունեցող անձ էր, քան պատվիրակությունն ու բոլոր պոլսահայ գործիչները: Դա էր պատճառը, որ Մ. Խրիմյանը բազմիցս փորձեց համոզել պատրիարքին, որպեսզի թույլ տա Նուբար փաշային հրավիրել Բեռլին: Միաժամանակ, Մ. Խրիմյանը Հայաստանի կառավարչի ամենաարժանի թեկնածու էր համարում Նուբարին, որը վարչական աշխատանքի մեծ փորձ էր ձեռք բերել Եգիպտոսում[4]:

Նուբարին Բեռլին հրավիրելու հարցում մեծ շահագրգռվածություն էր ցույց տալիս նաև Մելքոն խանը: Նա Բեռլինի կոնֆերանսի անմիջական մասնակիցներից էր և վստահ էր, որ հայանպաստ որոշումներ ընդունել տալու համար անհրաժեշտ է Նուբար փաշայի նման հմուտ դիվանագետի ներկայությունը:

Սակայն պատրիարքը ոչ միայն մերժեց Նուբարի ծրագիրը, այլև արգելեց նրան հրավիրել Բեռլին և պատվիրեց «մոռնալ Նուպարի անունն անգամ»[5]: Մ. Խրիմյանը, չնայած համաձայն չէր պատրիարքարանի հետ և բազմիցս անհաջող փորձեր արեց համոզելու, որ հաջողության հասնելու միակ հնարավորությունը Նուբարին Բեռլին հրավիրելն է, ի վերջո, ստիպված էր համակերպվել Կ. Պոլսից եկած հրահանգներին:

Պատրիարքը դեռ հավատում էր, որ Վ. Վադինգտոնը օգնելու էր վեհաժողովում, չգիտես՝ ինչու հույս ուներ, որ նաև Օ. Բիսմարկը կաջակցի[6]:

Փաստորեն, արևմտահայերի ապագան տնօրինելու կոչված պոլսահայ ղեկավար գործիչները, ինչ-ինչ նկատառումներից ու շահերից ելնելով, կտրականապես դեմ արտահայտվեցին Հայկական հարցի լուծումը Նուբար փաշայի պես հմուտ պետական գործչին ու դիվանագետին վստահելը, որին հակված էր նաև Մ. Խրիմյանը: Այդ կոպիտ սխալի համար հետագայում շատ թանկ վճարեց մեր ժողովուրդը:

---

[1] Պատգամաւորի մը յուշատետրէն, «Անահիտ», 1900, թիւ 4-5, էջ 119:
[2] Չօպանեան Ա., Ստեփան Փափազեանի յուշատետրը, «Անահիտ», 1907, թիւ 6-9, էջ 151:
[3] Նույն տեղում, թիւ 10-12, էջ 162:
[4] Նույն տեղում, թիւ 6-9, էջ 153:
[5] Նույն տեղում, էջ 164:
[6] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, էջ 65:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ Բեռլինում…

Վեհաժողովին ամենահիմնավոր ձևով պատրաստվել էր Մեծ Բրիտանիան: 1878 թ. մայիսի 18-ին Լոնդոնում վերջինիս և Ռուսաստանի միջև գաղտնի համաձայնագիր ստորագրվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման պայմանների մասին[1]: Համաձայնագրի 7-րդ կետը նախատեսում էր, որ Սան Ստեֆանոյի պայմանագրով Հայաստանին վերաբերող խոստումները պետք է տրվեն ոչ միայն Ռուսաստանի, այլև Բրիտանիայի կողմից: 10-րդ կետով որոշվեց Թուրքիային վերադարձնել Բայազետը և Ալաշկերտի հովիտը, քանի որ այդ տարածքով էր անցնում Պարսկաստանից եկող տրանզիտային խոշոր ճանապարհը: Դրա դիմաց Թուրքիան պետք է Պարսկաստանին զիջեր Կոտուրի շրջանը: Փաստորեն Պարսկաստանը, չլինելով հակամարտող կողմ, տարածքային ձեռքբերումներ էր ունենալու:

Լոնդոնի համաձայնագրի ստորագրման օրը Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Ռ. Սոլսբերին Կ. Պոլսում դեսպան Հ. Լեյարդին գրում է. «Ասիական Թիւրքիան բովանդակում է իր մէջ բազմաթիւ տարբեր ցեղերից և դաւանութիւններից բաղկացած ժողովուրդներ, որոնք ընդունակ չէն ինքնավարութեան, և անկախութեան ձգտում չունեն, իրանց հանգստութիւնն և քաղաքական բարեկեցութեան մասին ունեցած ծրագիրը նրանք ամբողջապէս պարտական են սուլթանի վարչութեան»[2]: Ինչպես տեսնում ենք, բրիտանական դիվանագիտության համար առաջնահերթ խնդիր էր թուրքական պետության ամբողջականության պահպանումը՝ հպատակ ազգերին համարելով ինքնավարության անընդունակ:

Պետք է նշել, որ հայ պատվիրակների գործունեությունը Եվրոպայում ավելի մեծ արձագանք ունեցավ, քան թուրքերը սպասում էին: Թուրքական պատվիրակության ղեկավար Կարաթեոդոր փաշան Բեռլինից հեռագրեց Բ. Դռանը, որ Հայկական հարցի բարձրացումը կոնֆերանսում կարող է լուրջ անհանգստություն պատճառել իրենց: Նա առաջարկում էր Հայաստանում հնարավորինս շուտ որոշ բարենորոգումներ կատարել և հայ պատվիրակներին հետ կանչել: Բ. Դուռը Հայաստանում կատարված հարստահարությունների հարցը քննարկելու համար Ալի Շեֆիկ բեյին նշանակեց քննիչ հանձնաժողովի նախագահ, իսկ պատրիարքարանին առաջարկեց իր ներկայացուցչին նշանակել այդ հանձնաժողովում: Հայ գործիչները, քննարկելով այդ հարցը, կառավարությանը տեղեկացրին, որ եթե ցանկանում է պատժել հանցագործներին, ապա դա կարող է անել նաև առանց իրենց: Դրանով ցույց տվեցին, որ չեն վստահում թուրքական իշխանությունների խոստումներին[3]:

Վեհաժողովի բացման օրը՝ հունիսի 1-ին, Գերմանիայի թագաժառանգ Ֆրիդրիխը վեհաժողովի մասնակիցների պատվին ճաշկերույթ կազմակերպեց, որին հրավիրված էին նաև հայ պատվիրակները: Թուրքական պատվիրակության անդամ, Բեռլինում դեսպան Սաադուլլահ բեյը, որը Սան Ստեֆանոյի բանակցությունների ժամանակ հայտարարել էր, որ հայ ազգ գոյություն չունի, այս անգամ շատ սիրալիր էր հայ եպիսկոպոսների հետ: Նա նույնիսկ խոստովանեց, որ ինքը ևս հայկական արմատներ ունի[4]: Այս ամենը արվում էր հայ պատվիրակներին սիրաշահելու և համոզելու համար, որպեսզի Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցը չբարձրացնեին և վերադառնային Կ. Պոլիս:

Թուրքական պատվիրակության նախագահ, ազգությամբ հույն Կարաթեոդոր փաշան հայ պատվիրակներին ասել էր. «Ես վեհաժողովին մէջ ձեր առաջարկներուն պիտի ընդդիմանամ, թէպէտ համոզուած եմ, որ Հայաստանի համար Հայկական վարչութիւնը աւելի նպաստաւոր է անշուշտ, քան մահմետական վարչութիւն մը»[5]:

Հունիսի 4-ին Կ. Պոլսում Մեծ Բրիտանիան պաշտպանական պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ, որով պարտավորվեց զենքի ուժով պաշտպանել թուրքական սահ-

---

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ձ Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 99-102:
[2] Սարուխան, նշվ. աշխ., էջ 407-408:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1878, Յուլիսի 6 (18):
[4] «Մշակ», Թիֆլիս, 1878, Յունիսի 29 (Յուլիսի 11):
[5] Սերոբեան Մ., Հայկական հարցը եւ անոր փուլերը, Պէյրութ, 1937:

մանները, եթե Ռուսաստանը փորձեր Կարսից, Արդահանից ու Բաթումից բացի այլ տարածքներ գրավել Թուրքիայից, իսկ դրա փոխարեն սուլթանը Մեծ Բրիտանիային զիջեց Կիպրոսը[1]:

Եթե մինչ այդ թուրքերը համոզում էին հայերին, որ հրաժարվեն ինքնավարության ծրագրից և խոստանում էին հայ կառավարիչ նշանակել Հայաստանում, ապա Կիպրոսի համաձայնագրից հետո հրաժարվեցին դրանից, իսկ սուլթանը պահանջեց Բեռլինից հետ կանչել հայ պատվիրակներին: Երբ հայ պաշտոնյա Սահակ էֆենդի Ապրոն թուրքական իշխանությունների հրահանգով փորձեց պատրիարքին համոզել, որ կատարի սուլթանի հրամանը, Ներսես Վարժապետյանը համարձակորեն պատասխանեց, որ եթե ստիպեն, ապա ավելի գերադասելի կհամարի կախվել պատրիարքարանի դռնից[2]:

Այս առթիվ Գր. Արծրունին գրում է. «Թիւրքիայի հայոց հոգևորականութիւնը սկսում է արթնանալ, սկսում է նոր ոգի ստանալ, դառնում է ազգային ոգի ունեցող, սկսում է հասկանալ իր կոչումը և առաջնորդել ժողովուրդը իր պահանջների, իր կենսական ձգտումների մէջ: Թիւրքիայի հայոց հոգևորականութիւնը արժանի է դառնում ամբողջ ազգի խորին համակրութեան»[3]:

Հունիսի 6-ին Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան համաձայնության եկան Բեռլինի վեհաժողովում ընդհանուր քաղաքական գիծ վարելու շուրջ, որի արդյունքում վերջինս զավթեց Բոսնիա-Հերցոգովինան[4]: Դեռևս 1877 թ. հունվարի 15-ին Բուդապեշտում ստորագրվել էր ռուս-ավստրիական գաղտնի համաձայնագիր, որով Ավստրո-Հունգարիան խոստանում էր չեզոքություն պահպանել ռուս-թուրքական պատերազմի դեպքում, իսկ դրա դիմաց ստանալու էր Բոսնիա-Հերցոգովինան[5]: Ինչպես տեսնում ենք, ռուս-թուրքական պատերազմի արդյունքում տարածքային ձեռքբերումներ ունեցավ ևս մեկ երկիր, որը չէր մասնակցել ռազմական գործողություններին:

Ռ. Սոլսբերին Բեռլինի վեհաժողովի ժամանակ Ֆրանսիայի պատվիրակության ղեկավար Վ. Վադինգտոնին առաջարկեց թուրքերից գրավել Թունիսը[6]: Ինչպես տեսնում ենք, որպես «թուրքերի պաշտպան» հանդես եկող բրիտանացիները եվրոպական տարբեր տերությունների ներկայացուցիչներին իրենց կողմը գրավելու համար նրանց առատաձեռնորեն բաժանում էին օսմանյան տարածքները՝ իհարկե չմոռանալով վերցնել նաև սեփական յուղոտ պատառը:

Հ. Սառիկյանը գրում է. «Անգլիան հաղթանակեց առանց մատը մատին խփելու, լոկ բանակցությունների ճանապարհով և ռուսական զորքի թափած արյունով նա կրակից իր համար շագանակ հանեց»:[7]

Այդ ամենի հետևանքով վեհաժողովում վճռական խոսքը պատկանում էր Մեծ Բրիտանիային: Մյուս տերությունները ևս ամեն կերպ ձգտում էին նվազագույնի հասցնել Ռուսաստանի ձեռքբերումները և աջակցում էին Բրիտանիայի հակառուսական քաղաքականությանը: Ռուսական դիվանագիտությունը մատնվեց ձախողման, արձանագրեց լուրջ պարտություն, որի արդյունքում Ռուսաստանը միայնակ մնաց ամբողջ Եվրոպայի դեմ: Այսպիսով՝ բրիտանական դիվանագիտության ջանքերի արդյունքում Ռուսաստանը ստիպված էր համակերպվել լուրջ զիջումներ կատարելու մտքին, իսկ պատերազմին չմասնակցած Մեծ Բրիտանիան, Ավստրո-Հունգարիան, Պարսկաստանը, առանց արյուն թափելու, տարածքային որոշակի ձեռքբերումներ ունեցան:

1878 թ. հունիսի 1-ին բացվեց Բեռլինի վեհաժողովը: Այն սկսվելուց գրեթե երկու շաբաթ անց Մ. Խրիմյանի պատվիրակությունը որոշեց հայության ձգտումները պաշտո-

---

[1] Լէօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 103-105:
[2] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, էջ 181: «Մշակ», Թիֆլիս, 1878, Յուլիսի 1 (13):
[3] «Մշակ», Թիֆլիս, 1878, Յուլիսի 4 (16):
[4] Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1997, թիվ 1, էջ 10:
[5] Բադալյան Խ., «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ., Ե., 1955, էջ 44-45:
[6] Սահակյան Ռ., Հայկական հարցը և Ֆրանսիան (1870-1890-ական թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 1994, թիվ 1-2, էջ 134:
[7] Սառիկյան Հ., Հիշողություններ, 1878-1924, Ե., 2015, էջ 120:

նապես ներկայացնել կոնֆերանսի քննարկմանը: Հունիսի 13-ին հայ պատվիրակները վեհաժողովի անդամներին ներկայացրին հայկական պահանջների հուշագիրը, սակայն այն չքննարկվեց, իսկ հայ պատվիրակներին այդպես էլ թույլ չտվեցին մտնել նիստերի դահլիճ: Վերջիններս տեղյակ չէին, թե ինչ էր կատարվում վեհաժողովում:

Բեռլինում թուրքական դեսպանատան և պատվիրակության կազմում աշխատող հայերը (թուրքական պատվիրակության ծածկագրերի գծով քարտուղար Խաչիկ Օտյանը, պաշտոնական գրագրությունների գծով քարտուղար Կարապետ Գարագաշը, դեսպանատան քարտուղար Հովհաննես Պաղտատլյանը ևն) գրեթե ոչ մի օգնություն ու տեղեկություն չտրամադրեցին Մ. Խրիմյանի պատվիրակությանը[1]: Խ. Օտյանը մի քանի անգամ փորձեց համոզել հայ պատվիրակներին, որպեսզի բավարարվեն հայ կառավարիչ պահանջելով, քանի որ հայերը պաշտպան չունեին և չէին կարող հասնել բաղձալի ինքնավարության, սակայն նրան չլսեցին[2]:

Հայ պատվիրակները հանդիպեցին ռուսական պատվիրակության ներկայացուցիչներին, սակայն Ա. Գորչակովը և Պյոտր Շուվալովը նշեցին, որ Հայաստանին ինքնավարություն չի տրվելու և միակ բանը, որ հայերը կարող են հուսալ, 16-րդ հոդվածի նման կետն է[3]:

Հունիսի 15-ին թուրքական պատվիրակության ղեկավար Կարաթեոդոր փաշան Մ. Խրիմյանին տեղեկացրեց, որ հայ կառավարչի նշանակումն արդեն նույնպես բացառվում է: Մ. Խրիմյանը պատրիարքարանին հեռագրեց այդ մասին՝ առաջարկելով աշխատել, որ հնարավորության դեպքում թեկուզ հայ կառավարիչ ունենան, որին կողմ էր նաև Նուբարը, և այդ պաշտոնը հանձնեն վերջինին, սակայն դա մերժվեց: Ս. Փափազյանի հուշերից պարզ է դառնում, որ պոլսահայերը մտածում էին, որ իբր Նուբարը համագործակցում է Փարիզի թուրքական դեսպանի հետ, և նրանք փորձում են թուլացնել հայկական պահանջատիրությունը[4]: Այդ ապատեղեկատվությունը, հավանաբար, տարածվել էր թուրքական իշխանությունների կողմից, որի շնորհիվ կանխեցին հայազգի պետական գործչի միջամտությունը Հայկական հարցի լուծմանը:

Հունիսի 22-ին և հաջորդ օրը վեհաժողովը մակերեսորեն անդրադարձավ նաև Հայկական հարցին: Այստեղ Բրիտանիայի առաջարկությամբ և մյուս տերությունների լուռ համաձայնությամբ որոշվեց փոփոխության ենթարկել Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը: Հունիսի 25-ին Բրիտանիայի ԱԳ նախարար Ռ. Սոլսբերին վեհաժողովի մասնակիցներին ներկայացրեց հայկական բարենորոգումների վերաբերյալ բանաձևի տեքստը, որն ընկավ 61-րդ հոդվածի հիմքում: Բրիտանացի դիվանագետները այն նախապես համաձայնեցրել էին թուրքական պատվիրակների հետ[5]:

Հունիսի 26-ին հայ պատվիրակները տեղեկացան, որ ինքնավարության կամ հայ կառավարչի հարցը չի քննարկվել կոնֆերանսում, այլ միայն նախատեսված է, որ թուրքերը Հայաստանում բարենորոգումներ կատարեն: Դա մեծապես հիասթափեցրեց հայ պատվիրակներին, որոնք անմիջապես այդ վատ լուրը հեռագրեցին Կ. Պոլիս: Հաջորդ օրը Կ. Պոլսից իրենց տեղեկությունները հաստատող պատասխան և բողոքելու հրահանգ ստացան:

Հունիսի 30-ին Կ. Պոլսից կրկին բողոք ներկայացնելու պահանջ եկավ: Նույն օրը Խ. Օտյանը հայ պատվիրակներին հանձնեց այն ձևակերպումը, որն ընկած էր 61-րդ հոդվածի հիմքում: Պարզ դարձավ, որ նույնիսկ Հայաստան անունը չի հիշատակվելու պայմանագրում: Հայ պատվիրակները փորձեցին հանդիպել Վ. Վադինգտոնի, Ռ. Սոլսբերիի և այլ պետական գործիչների հետ, բայց տարբեր պատճառաբանություններով նրանցից մերժում ստացան[6]:

---

[1] Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, էջ 12:
[2] Պատգամաւորի մը յուշատետրէն, 1900, թիւ 3, էջ 93:
[3] Գաբիկյան Խ., նշվ. աշխ., էջ 228:
[4] Պատգամաւորի մը յուշատետրէն, 1900, թիւ 3, էջ 93:
[5] Լէօ, նշվ. աշխ., էջ 106-109:
[6] Պատգամաւորի մը յուշատետրէն, 1907, թիւ 3-5, էջ 58-60:

1878 թ. հուլիսի 1-ին ստորագրվեց Բեռլինի պայմանագիրը[1]: 58-րդ հոդվածով Ռուսաստանին անցան Կարսը, Արդահանը, Բաթումը, իսկ 60-րդ հոդվածով Ալաշկերտի հովիտը և Բայազետը վերադարձվեցին Թուրքիային: Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցավ 61-րդ հոդվածը, որը փոխարինել էր Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին: Այն ձևակերպված էր հետևյալ կերպ. «Բ. Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Բ. Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցառումների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»[2]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն խոսք չկար «Հայաստան» երկրի մասին, այլ միայն հիշատակվում է «հայաբնակ մարզեր» հասկացությունը, որտեղ կատարվելիք անորոշ բարենորոգումների կատարման վերահսկողությունը դրվում էր եվրոպական մեծ տերությունների վրա, որոնք տարբեր շահեր ու նկատառումներ ունեին այս հարցում:

Ի սկզբանե պարզ էր, որ 61-րդ հոդվածը ստեղծված էր քողարկելու հայ ժողովրդի արդարացի պահանջների մերժումը: Այսպիսով՝ հայերը ստիպված էին հրաժարվել ոչ միայն ինքնավարության գաղափարից, այլև համակերպվել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անորոշ ու կասկածելի հեռանկարով:

Հուլիսի 1-ին տեղեկանալով աննպաստ պայմանագրի մասին և համոզվելով, որ հայկական բաղձանքներն ու հույսերը տապալվել են՝ հայ պատվիրակները բողոքի հուշագիր ներկայացրին Բեռլինի վեհաժողովի որոշումների դեմ: Այն պարունակում էր բավական կոշտ արտահայտություններ, սակայն արդեն ուշացած քայլ էր: Այն հայտարարում էր. «Մէկ քանի միլիոնէ աւելի բաղկացած ազգ մը որ մինչեւ հիմա ոչ մէկ օտար քաղաքականութեան գործիք եղած չէ, որ չնայած աւելի հարստահարուած ըլլալուն Թուրքիոյ միւս քրիստոնեաներէն, ոչ մէկ նեղութիւն պատճառած է թուրք կառավարութեան և որ թէեւ եւրոպական մեծ պետութեան մը դաւանակից և ցեղակից չէ, ինչպէս Թուրքիոյ միւս քրիստոնեայ ժողովուրդները, այս մեր դարուն կարող է յուսալ թէ միեւնոյն պաշտպանութիւնը կը գտնէ ինչ որ միւսները: Մենք կարծեցինք թէ այսպիսի ժողովուրդ մը իրաւունք կը ստանայ հայկական հողի վրայ հայ պաշտօնեաներով կառավարուելու: Հայերը հասկցան թէ խաբուեր են, որովհետեւ խաղաղասէր են եղած և թէ իրենց նախնի եկեղեցիի անկախութիւնը և ազգութիւնը պահելով ոչինչ չեն ձեռք բերած: Հայ ժողովուրդը երբեք պիտի չդադրի աղաղակելու մինչեւ որ Եւրոպա արդար գոհացում տայ իր պահանջներուն»[3]:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, արդեն երևում է Մ. Խրիմյանի «երկաթե շերեփի» գաղափարը: Բեռլինից վերադառնալուց հետո նա քարոզներից մեկի ժամանակ հետևյալ կերպ բնութագրեց իր պատվիրակության ձախողումը: «Գացի Եւրոպա ձեզ ազատութիւն բերելու, և ի՞նչ տեսայ այնտեղ. Պերլինի մէջ դրուած մի մեծ պղինձ՝ մէջը լիքը հարիսայ. զանազան ազգերու պատուիրակներ կուգային և երկաթէ շերեփներով հարիսայէն կը վերցնէին ու կ'ուտէին: Գարատաղցին, Պուլկարը, Սերպը, ամէնն ալ առին իրենց մասերը: Կարգը գալով մեզ Հայոցս, ես ալ ձեռքիս աղերսաթուղթը ցուցնելով աղաչեցի որ ամանս ալ լնուն հարիսայ: Յայնժամ կաթսայի գլուխն սպասող մեծաւորները ինձ հարցուցին, թէ ու՞ր է քո շերեփը: Յիրաւի հոս հարիսայ կը բաժնուի, բայց շերեփ չունեցողն չի կարող անոր մօտենալ: Եւ յիրաւի տեսայ, որ Գարատաղցուն, Պուլկարին և այլոց պատուիրակներուն քով կային մի քանի քաջեր, որոնց վրայէն կախուած սուրերէն արիւն կը վազէր:

Յայնժամ դարձրի իմ երես և իբր թէ կը փնտռէի իմ Զեյթունցի, Սասունցի և Մշեցի քաջերս. ու՞ր էին, պէտք չէ՞ր որ անոնցմէ մէկ-երկու հոգի ալ իմ քովս գտնուէին և նոցա արիւնոտ թուրերը եւրոպացոց աչքը խոթելով բարձրաձայն աղաղակէի թէ՝ տեսէ՛ք, հոս

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ձ Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 105-130:
[2] Նույն տեղում, էջ 128:
[3] Գաբիկյան Խ., նշվ. աշխ., էջ 235-236:

է շերեփը: Բայց չկար…: Մի աղերսաթուղթ ունէի ձեռքս, ան ալ թրջուեց ու հարիսային մէջ մնաց, ուստի ես եկած եմ այսպէս դատարկաձեռն…»[1]:

Սակայն, պետք է խոստովանել, որ հայ գործիչներն անհրաժեշտ դասեր չքաղեցին Բեռլինի վեհաժողովից և հետագայում ևս շարունակեցին հույսեր կապել այս կամ այն տերության բարի կամքի դրսևորման հետ: Այդ անհրաժեշտ եզրակացությունների բացակայությունը հետագայում հանգեցրեց ավելի մեծ ողբերգության:

Մինաս Չերազը Բեռլինում պատվիրակության և Հայկական հարցի ձախողումն արդարացնելու համար Կ. Պոլսում փորձում էր ապացուցել, որ 61-րդ հոդվածն ավելին էր տալիս հայ ժողովրդին, քան Սան Ստեֆանոյի պայմանագիրը, և Բրիտանիայի օգնությամբ հնարավոր կլինի բարելավել արևմտահայերի վիճակը: «Պէրլինի Վեհաժողովէն մի ոսկէհանք շահեցանք. մեզ անկ է խիզախել եւ հանել ոսկին»[2],- գրում է նա: Իհարկե, այդ տեսակետը կապ չուներ իրականության հետ, և մեր ժողովուրդն այդպես էլ այդ «ոսկեհանքից» օգուտ չստացավ, այլ ընդհակառակը՝ մեծապես տուժեց:

1878 թ. հոկտեմբերի 6-ին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովում պատասխանելով Հայկական հարցը ձախողելու մասին քննադատությանը՝ Ներսես պատրիարքը նշում էր. «Գալով մեր խնդրոյն վերաբերեալ 16րդ և 61րդ յօդուածոց բաղդատութեան, ես բացարձակ կը յայտարարեմ որ երկուքն ալ բաւական դարմանատար չեն մեր ցաւոց, բայց երկուքն ալ ի չգոյէ յառաջ եկած և 16րդին մէջ հսկողութիւնը միայն մէկ տէրութեան վրայ, իսկ 61րդին մէջ բոլոր դաշնակից տէրութեանց վերագրեալ ըլլալուն, մին և միւսը մեր շնորհակալեաց արժանի են, թերևս 61րդը առաւել քան զ16րդը»[3]:

Գր. Արծրունին Հայկական հարցի սկզբնավորման հենց սկզբում արձանագրված պարտության մասին գրում է. «Ազգերը պատրաստվում են քաղաքական կեանքի համար տաս տարիների, հարիւր տարիների ընթացքում, ձգտում են, ջանքեր են անում այս կամ այն հետևանքին հասնելու, շատ անգամ արած ջանքերը անաջող են լինում,- բայց կեանք և բնաւորութիւն ունեցող ազգերը ոչպէական անաջողութենից չը պէտք է վհատվեն… Ամեն մի անաջողութեան վրա ապագայ ունեցող ազգերը պէտք է նայեն ինչպէս մի դասի վրա, որի դառն փորձից պէտք է օգուտ քաղեն անցեալում իրանց բռնած սխալ ընթացքը ուղղելու համար»[4]:

Պետք է խոստովանել, որ Ն. Վարժապետյանը 1878 թ. հաջորդող տարիներին բավական ջանք գործադրեց հայության քաղաքական ու մշակութային վերազարթոնքի կազմակերպման համար: Հաշվի առնելով դառը փորձը՝ նա ձգտում էր ժողովրդին նախապատրաստել հաջորդ պատեհ առիթը բաց չթողնելու համար: Այս առթիվ բավական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հույն դիվանագետ Նապոլեոն Բեցոսն իր ղեկավարությանը 1883 թ. ուղարկած զեկուցագրում. «Մոտավորապես մեկ հնգամյակ ես ծառայել եմ Տրապիզոնում, որի վիլայեթում հայեր են ապրում. ճանաչեցի, ինչքան կարողացա, հայկական տարրը և հաճախ ցավ զգացի այդ դժբախտ ժողովրդի, քրիստոնյա ազգի հոգևորականության աննկարագրելի անկման համար: Մարդ պիտի նկատեր 1878 և հատկապես 1879 թվականից, կարծես մոգական գավազանով սկիզբ առած փոփոխությունն ու կերպարանափոխությունը: Բազմաչարչար և ստորացած կյանք վարած հայ եպիսկոպոսներն սկսեցին թելադրել՝ կազմակերպվեցին հնարավորինս ազգային դեմք ունեցող լավ վիճակում գտնվող դպրոցներ: Եպիսկոպոսները նշանակվում էին տեղին: Նախկին պատրիարք Կերմիանը (Խրիմյան) ընդունեց Վանի եպիսկոպոսությունը: Մի խոսքով, հայոց ցիրուցան եղած ու ճնշված, դժբախտ ազգի վրա ազգային շունչ փչեց: Ինչպե՞ս հանկարծակի սկսվեց փոփոխությունը, որը, ինչպես երևում է, շարունակվում է: Պատճառը պարզ է ու հայտնի. վճռական շունչ հաղորդեց մի այր, Կոստանդնուպոլսի պատրիարք նշանակված Ներսեսը, հաղորդակից և գործակից ունենալով անվեհեր ու խորամիտ, նախկին պատրիարք Խրիմյանին: Նա սկսեց բզիկ-

---

[1] Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 98-99:
[2] Չերազ Մինաս, Թէ ինչ շահեցանք Պէրլինի վեհաժողովէն, Կ. Պոլիս, 1878, էջ 29:
[3] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, էջ 177:
[4] Արծրունի Գր., Դասից օգուտ քաղենք, «Մշակ», Թիֆլիս, 1878, Յուլիսի 11 (23):

բզիկ եղած ազգը շարժման մեջ դնել, բոլորի կողմից մերժված ու կտոր-կտոր եղած ազգը, գետին տապալված ազգը…»[1]:

Ցավոք, այդ ազգային զարթոնքը երկար չտևեց և չկարողացավ հասցնել գլխավոր նպատակին՝ արևմտահայության վիճակի բարելավմանը և ինքնավարության ձեռքբերմանը: Թուրքական իշխանությունները հետզհետե խստացրեցին հալածանքները, ապա անցան զանգվածային կոտորածների ցեղասպանական քաղաքականությանը, որով կանխեցին Արևմտյան Հայաստանի ինքնավարության ձեռք բերման բնական գործընթացը:

Քաղաքական հարցերում բավական խորագիտակ գործիչ Գ. Օտյանը, իրադարձությունների հետագա զարգացումը տեսնելով, ցավով արձանագրեց. «Յաջողեցանք 61րդ յօդուած մը դնել Պերլինի դաշնագրին մէջ, իցիւ թէ յաջողէինք ջնջել զայն»[2]:

Հայ ժողովրդի ճակատագրում նոր ժամանակաշրջան սկսվեց, երբ Հայկական հարցը Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի միջոցով դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Այն ասպարեզ իջեցվեց արևմտահայությանն օգնելու պատրվակով, սակայն ոչ միայն որևէ բարելավում չմտցրեց նրանց կյանքում, այլ ավելի վատթարացրեց վիճակը և դարձավ այն գլխավոր պատճառներից մեկը, որը հանգեցրեց Հայոց ցեղասպանությանը: «Արևմտահայ ժողովրդին փրկելու անվան տակ հորինված այդ հոդվածը, իրականում դարձավ նրա գերեզմանը փորելու գործիք»[3],- նկատում է պատմաբան Ռ. Հովհաննիսյանը:

Հայկական հարցի սկզբնավորման փուլում հայ գործիչները հույս ունեին եվրոպական մեծ պետությունների օգնությամբ ազատվել թուրքական դժնդակ լծից, ստանալ ինքնավարություն, իսկ հետագայում, ինչու չէ, հասնել անկախության: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ մեր ազգը ճիշտ չէր կողմնորոշվում միջազգային բարդ ու խճճված հարաբերություններում, քանի որ պետականության երկարատև բացակայության պայմաններում չունեինք պատրաստված դիվանագետներ: Արևմտահայության հոգևոր և քաղաքական ղեկավարությունը ստանձնած Կ. Պոլսի պատրիարքարանը դեմ էր հայերի զինված ելույթներին՝ հուսալով, որ «օսմանյան հայրենիքին» ցուցաբերած հավատարմության և մեծ պետությունների աջակցության շնորհիվ հայ ժողովրդին կտրվի սպասված ինքնավարությունը, բայց չարաչար սխալվեց:

Այս շրջանում ամենամեծ բացթողումը Նուբար փաշայի ծրագիրը մերժելը և նրա դիվանագիտական կարողություններից ու անձնական կապերից օգտվելուց հրաժարվելն էր: Ժամանակաշրջանի և իրադրության վերլուծության արդյունքում, մենք հանգել ենք այն տեսակետին, որ Նուբար փաշայի ծրագիրը բավական իրատեսական էր: Ոչ ոք չի կարող ասել, թե ինչ զարգացումներ կունենար Հայկական հարցը, եթե Նուբարն իր ծրագրով ներկայանար Բեռլինի կոնֆերանսին: Պայմանագրում հայանպաստ հոդվածներ մտցնելը, իհարկե, դեռ բավարար երաշխիք չէր արևմտահայերի վիճակը բարելավելու համար, անհրաժեշտ կլիներ թուրքերին պարտադրել դրանք կիրառել: Սակայն, մեր կարծիքով շատ մեծ էր հավանականությունը, որ արևմտահայությունը հնարավորություն կունենար փրկվելու հետագա ջարդերից ու Մեծ եղեռնից:

Հարյուրամյակներ շարունակ պետականությունից զուրկ մնացած հայ ժողովուրդը մեծ տերությունների միջև ընթացող դիվանագիտական սուր պայքարի արդյունքում չկարողացավ ճիշտ կողմնորոշվել և մնաց ձեռնունայն: Բաց թողնվեց Արևմտյան Հայաստանի համար ինքնավարություն ձեռք բերելու կամ թեկուզ հայ կառավարիչ ունենալու պատեհությունը: Դա հնարավորություն կտար ապահովելու քաղաքական, տնտեսական ու մշակութային առաջընթաց, արևմտահայությանը կփրկեր ֆիզիկական բնաջնջման վտանգից և հիմքեր կստեղծեր անկախ պետականության վերականգնման համար: Կարծում ենք՝ Հայկական հարցի սկզբնավորման և զարգացման փուլերում

---

[1] Խասիոտիս Ի., Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. Հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876-1996), թարգմ.՝ Հ. Բարթիկյան, Ե., 2012, էջ 16:

[2] Օտեան Գ., Սահմանադրական խօսքեր ու ճառեր, դամբանականներ մահերու առթիւ գրուածներ, Կ. Պոլիս, 1910, էջ ԺԵ:

[3] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 178:

թույլ տրված բացթողումներն ու սխալները, պատմական զարգացումների ճիշտ, անկողմնակալ վերլուծությունն ու գնահատումն անհրաժեշտ նախադրյալներ են մեր ազգի ներկան ու ապագան ճիշտ հունով տանելու համար:

Самвел Погосян, Проекты автономной Армении в 1878 году от Сан Стефано до Берлин. В результате русско-турецкой войны 1877-1878 годов, большая часть Западной Армении была вновь освобождена. Западные армяне надеялись, что они будут наконец освобождены от насилия турок и курдов, и будут иметь возможность получить такую автономию как балканские народи или перейти под российское господство, где им не угрожал бы риск физического уничтожения. Армянские национальные деятели, пользуясь благоприятной ситуацией, создали различные проекты и представили великим державам. Анализируя период и ситуацию, мы пришли к выводу, что наиболее реалистичным из них был план Нубар-паши, который был отвергнут Патриархатом.

На протяжении многих веков армянский народ остался без государственности и в результате острой дипломатической борьбы между великими державами не с мог правильно ориентироваться и остался ни с чем. Была упущена возможность получить автономию Западной Армении или, по крайней мере, иметь армянского губернатора. Это позволило бы обеспечить политическое, экономическое и культурное развитие, западные армяне были бы спасены от опасности физического уничтожения и это позволило бы заложить основу для восстановления независимого государства.

Ключевые слова: автономия Западной Армении, соглашение Берлина, Нубар-паша, Мкртич Хримян.

Samvel Poghosyan, The projects of autonomous Armenia in 1878 from San Stefano to Berlin. In the result of the 1877-1878 Russian-Turkish war, a great part of Western Armenia was again liberated. Western Armenians hoped that they would finally be liberated from the violence of Turks and Kurds and would have an opportunity to get autonomy as the Balkan nations or would pass under Russian domination, where the risk of physical destruction wouldn't face them. The Armenian national figures, taking advantage of the favorable situation, made various projects and presented to great powers. Analyzing the period and the situation, we came to the conclusion that the most realistic of them was Nubar Pasha's plan, which was rejected by the Patriarchate.

For centuries, the Armenian nation remained without statehood and as a result could not correctly orient in the sharp diplomatic struggle between great powers and failed. The opportunity to gain autonomy for Western Armenia or at least to have an Armenian governor was missed. This would enable them to ensure the political, economic and cultural progress, the Western Armenians would be saved of a danger of physical destruction and would lay the foundation for the restoration of an independent state.

Key words: Autonomy of Western Armenia, Berlin treaty, Nubar Pasha, Mkrtich Khrimyan.